ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ 1
   1.1. Արդյունաբերություն 2
   1.2. Շինարարություն 3
   1.3. Ծառայություններ 4
   1.4. Առևտուր 5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ 6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 8
4. ՓՈԽԱՐԺԵՔ 9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ 10
   5.1. Բյուջեի եկամուտները 10
   5.2. Բյուջեի ծախսերը 12
   5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը 13
   5.4. Պետական պարտք 13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ 14
   6.1. Գնաճ 14
   6.2. Ավանդներ 15
   6.3. Վարկեր 16
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 18
8. ԱՄՓՈՓՈՒՄ 19

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի տարեսկզբից ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) բավական բարձր է եղել, որը, սակայն, պայմանավորված է համեմատվող տարվա նույն ամիսներին ցածր բազայի առկայությամբ: Հետևաբար, բազայի վերականգնմանը զուգընթաց, ՏԱՑ-ի տեմպը հաջորդ ամիսներին աստիճանաբար կնվազի: Այսպես՝ 2022թ. հունվարին ՏԱՑ-ը կազմել է 15.4%, իսկ փետրվարին դանդաղել է՝ կազմելով 9.0%: Արդյունքում, հունվար-փետրվար ամիսներին տնտեսական ակտիվության աճը կազմել է 12%:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



2022թ. հունվար-փետրվար ամիսների ՏԱՑ-ի աճին առավելապես նպաստել է ծառայությունների ոլորտը՝ ապահովելով 12% աճի շուրջ 4.1 տոկոսային կետը: Առևտրի և արդյունաբերության ոլորտները նույնպես զգալի նպաստում են ունեցել ՏԱՑ-ի աճին՝ համապատասխանաբար 3.1 և 2.5 տոկոսային կետով, իսկ շինարարության դրական նպաստումը եղել է բավական համեստ՝ շուրջ 0.3 տոկոսային կետ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2022թ. հունվար-փետրվարին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Ինչպես ՏԱՑ-ի դեպքում, արդյունաբերության աճի տեմպը նույնպես դանդաղել է: Բազայի էֆեկտի ազդեցությունը արդյունաբերության ոլորտում նույնպես առկա է և կշարունակի լինել նաև հետագա ամիսներին: Փետրվարին գրանցվել է արդյունաբերության 3.7% աճ՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 12.9 տոկոսային կետով: Հունվար-փետրվարի աճը նախորդ տարվա նույն ամիսների նկատմամբ կազմել է 9.7%:

Արդյունաբերության աճը 2022թ. հունվարին[1] պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շուրջ 25.1% աճով, որի նպաստումը ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է 12.5 տոկոսային կետ: Վերջինս էլ հիմնականում բացատրվում է սննդամթերքի, խմիչքների, հիմնային մետաղների և ոսկերչական արտադրատեսակների արտադրության աճով, որոնց գումարային նպաստումն ընդհանուր արդյունաբերությանը կազմել է շուրջ 9.2 տոկոսային կետ: Հանքարդյունաբերությունն ունեցել է բացասական նպաստում՝ շուրջ 0.3 տոկոսային կետով:

Արդյունաբերության աճին նպաստել են նաև «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղերի աճերը՝ համապատասխանաբար 4.3 և 0.1 տոկոսային կետով:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության ծավալների աճի տեմպն արագացել է: Շինարարության աճն ընթացիկ տարվա փետրվարին կազմել է 6.3%՝ հունվարի համեմատ արագանալով 3.3 տոկոսային կետով: Այս արագացումը, սակայն, կարող է կարճաժամկետ լինել, քանի որ հաջորդ ամիսներին նախորդ տարվա զգալիորեն մեծ բազայի համեմատ հնարավոր է շինարարության աճի տեմպի դանդաղում:

[1] 2022թ. փետրվարի տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների աճի տեմպը նույնպես դանդաղել է, սակայն շարունակում է մնալ բավական բարձր: 2021թ. հունվար-փետրվար ամիսներին ծառայությունների ծավալը զգալիորեն նվազել էր՝ կապված երկրում տիրող բացասական բազմաթիվ երևույթների հետ: Այդ իրավիճակի համեմատ ընթացիկ տարում ծառայությունների ծավալը զգալիորեն աճել է՝ հունվար-փետրվարին կազմելով շուրջ 20.1%:

2022թ. հունվար ամսվա տվյալներով[2] ծառայությունների աճը մեծամասամբ պայմանավորված է «տրանսպորտի», «տեղեկատվության և կապի» և «կացության և հանրային սննդի կազմակերպման» ենթաճյուղերի աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 6.3, 5.1 և 3.1 տոկոսային կետ:

[2] 2022թ. փետրվարի տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտի աճը շարունակում է բացարձակ արժեքով ցածր մնալ նախորդ տարվա ցուցանիշից: 2022թ. փետրվարին առևտրի աճը կազմել է 5.3%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով ավելի քան երկու անգամ, ինչի արդյունքում հունվար-փետրվար ամիսների առևտրի աճը դանդաղել է՝ կազմելով 8.2%: Մինչդեռ համեմատվող տարում, առևտուրը նվազել էր շուրջ 10.8%-ով: Ստացվում է, որ առևտրի ծավալները դեռևս չեն վերականգնվել, ինչը արտացոլում է տնտեսությունում թույլ պահանջարկը՝ բարձր գնաճի պայմաններում:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ[3], %



Արտահանման աճը որոշակիորեն դանդաղել է, սակայն դեռևս գտնվում է բարձր մակարդակում: 2022թ. փետրվարին արտահանման աճը կազմել է շուրջ 29.1%, որը թեև շուրջ 1.8 անգամ դանդաղել է հունվարին արձանագրված ցուցանիշից, սակայն դեռևս մնում է բարձր մակարդակում: Պետք է նշել, սակայն, որ հաջորդ ամիսներին բազայի էֆեկտի պատճառով արտահանման աճի տեմպը զգալիորեն կնվազի:

2022թ. հունվար ամսվա տվյալներով[4] արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել հանքահումքային արտադրանքի աճով, որի նպաստումը կազմել է 15.5 տոկոսային կետ: Արտահանման աճին էական նպաստում են ունեցել նաև «պատրաստի սննդի արտադրանք», «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի արտահանման աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 10.9, 9.1 և 6.7 տոկոսային կետ:

Հատկանշական է, որ, ինչպես նշեցինք վերևում, հունվարին հանքարդյունաբերությունն ընդհանուր արդյունաբերությանն ունեցել է բացասական նպաստում, սակայն արտահանման աճի հիմնական շարժիչ ուժն է եղել: Սա պայմանավորված է նրանով, որ հանքարդյունաբերության իրական

[3] ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է արտահանման հունվար ամսվա ցուցանիշը՝ նախկինում հրապարակված 53.2%-ը դարձնելով 53.3%:
[4] 2022թ. փետրվարի տվյալները դեռևս չեն հրապարակվել:

ծավալները նվազել են, սակայն գների աճի պատճառով դրանց արտահանման արժեքը մեծացել է: Ի դեպ, առանց մետաղների միջազգային գների աճի, արտահանման հունվար ամսվա աճն առնվազն 15.5 տոկոսային կետով ցածր կլիներ:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ[5], %



Ներմուծման ծավալների աճը նույնպես բավական բարձր է եղել: Ներմուծման աճը 2022թ. հունվար-փետրվարին կազմել է 60.2%՝ զգալիորեն բարձր լինելով նախորդ տարվա անկման բացարձակ արժեքից: Ներմուծման աճին նպաստել են գրեթե բոլոր ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճերը (հունվար ամսվա տվյալներով[6]), որոնցից առավել նշանակալի է եղել «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «հանքահումքային արտադրանք» (հիմնականում բնական գազ) և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի ներմուծումը, որոնք ունեցել են համապատասխանաբար 11.3, 9.5, 9.1 և 7.3 տոկոսային կետ:

[5] ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է ներմուծման հունվար ամսվա ցուցանիշը՝ նախկինում հրապարակված 65.0%-ը դարձնելով 67.3%:
[6] 2022թ. փետրվարի տվյալները դեռևս չեն հրապարակվել:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2022թ. հունվարին անվանական աշխատավարձի աճի տեմպն արագացել է[7], սակայն իրական աշխատավարձը նվազել է: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում հունվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 6.2%-ով՝ կազմելով 204,307.0 դրամ, սակայն 2021թ. դեկտեմբերի համեմատ մնացել է գրեթե նույն մակարդակում (դեկտեմբերին միջին աշխատավարձը կազմել էր 204,048.0 դրամ): Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 5.1%-ով և կազմել 172,663.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 6.0%-ով՝ կազմելով 218,834.0 դրամ:

Սակայն, 2022թ. հունվարին գնաճի տեմպը ավելի արագ է եղել, քան անվանական աշխատավարձի աճը՝ կազմելով 7.1%: Այդ պայմաններում իրական աշխատավարձը նվազել է շուրջ 0.8%-ով՝ այդ չափով նվազեցնելով վարձու աշխատողների կենսամակարդակը:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2021-2022թթ. հունվարին, %



[7] Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է պետական եկամուտների կոմիտեից (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) ստացվող եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, փետրվարի տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (%, աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



2022թ. հունվար-փետրվար ամիսներին ՀՀ դրամը զգալիորեն արժևորված է նախորդ տարվա նույն ամիսների համեմատ: Այսպես, ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ 2022թ. հունվար-փետրվարին կազմել է 480 դրամ՝ 2021թ. հունվարի 524 դրամի փոխարեն արժևորվելով շուրջ 8.6%-ով: Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի արժևորումը կազմել է 16.1%, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 12.6%: Սակայն, մարտի սկզբից նկատվել է ՀՀ դրամի կտրուկ արժեզրկում ԱՄՆ

դոլարի նկատմամբ՝ պայմանավորված ՌԴ ռուբլու արժեզրկմամբ, ինչպես նաև ռուս-ուկրաինական հակամարտության ազդեցությունների վերաբերյալ անորոշությունների առկայությամբ: Արժեզրկման ալիքը հնարավոր է եղել մեղմել ԿԲ կողմից տոկոսադրույքի կտրուկ բարձրացման շնորհիվ, որից հետո փոխարժեքը գրեթե վերադարձել է նախկին մակարդակին՝ կայունանալով 490 դրամի շուրջ:

Գծապատկեր 11. ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի անվանական փոխարժեքի օրական միտումները և ՀՀ ԿԲ շուկայական գործառնությունների տոկոսադրույքը 2022թ. փետրվար-մարտ ամիսներին



5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ[8]

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը զգալիորեն արագացել է: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2022թ. հունվար-փետրվար ամիսներին աճել են շուրջ 22.7%-ով: Հարկային եկամուտների աճը կազմել է 20.3%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 9.8 տոկոսային կետով: Պետական բյուջեի ոչ հարկային եկամուտները 2022թ. հունվար-փետրվար ամիսներին աճել են շուրջ 82.2%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ շուրջ 1.6%-ով:

[8] Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները կարող են փոքր-ինչ տարբեր լինել:

Գծապատկեր 12. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի (աճը՝ 25.0%), պետական տուրքի (աճը՝ շուրջ 3.5 անգամ) և ակցիզային հարկի (աճը՝ 51.4%) աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 9.5, 5.2 և 3.2 տոկոսային կետ:

Հարկային եկամուտների աճին շուրջ 3.0 տոկոսային կետով բացասական նպաստում է ունեցել բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով հարկային մուտքերի նվազումը: Վերջինիս գծով ՊԵԿ-ն իրականացրել է գումարների հետվերադարձ հունվար ամսին, ինչի արդյունքում հարկային մուտքերը նախորդ տարվա հունվար-փետրվարի 1.4 մլրդ դրամից ընթացիկ տարվա հունվար-փետրվարին դարձել են -5.0 մլրդ դրամ:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2021թ. Հունվար-փետրվար		2022թ. Հունվար-փետրվար	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	**-8.7**	**-8.7**	**20.3**	**20.3**
ԱԱՀ	-9.4	-3.6	25.0	9.5
Շահութահարկ	-38.1	-1.7	17.6	0.5
Եկամտային հարկ	-1.4	-0.5	1.5	0.5
Ակցիզային հարկ	-34.8	-3.0	51.4	3.2

Շրջանառության հարկ	-16.2	-0.6	28.3	1.0
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	-45.4	-0.5	-456.1	-3.0
Մաքսատուրք	6.2	0.3	11.6	0.6
Սոցիալական վճար	64.4	1.1	46.7	1.5
Այլ հարկային եկամուտներ	25.7	0.5	48.8	1.3
Պետական տուրք	-29.1	-0.8	255.3	5.2

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերը նույնպես զգալիորեն աճել են: Այսպես, 2022թ. հունվար-փետրվարին ՀՀ պետական բյուջեի ծախսերն աճել են շուրջ 13.9%-ով՝ կազմելով 231.2 մլրդ դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) աճերով: Ընթացիկ ծախսերն աճել են 9.9%-ով և ապահովել են ընդհանուր ծախսերի 9.5 տոկոսային կետ աճը, իսկ կապիտալ ծախսերն աճել են շուրջ 2 անգամ՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 4.4 տոկոսային կետով: Թեև բարձր աճը բացատրվում է նախորդ տարվա հունվար-փետրվարին կապիտալ ծախսերի խիստ ցածր մակարդակով, այնուամենայնիվ կապիտալ ծախսերի աճի տեմպի էական արագացումը դրական փոփոխություն է, և դրա շարունակականությունն անհրաժեշտ է նախորդ տարիների էական թերակատարումների արդյունքում տնտեսության պոտենցիալի կորուստը որոշակի չափով վերականգնելու համար:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 14. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



Պետական բյուջեն շարունակել է լինել հավելուրդային: 2022թ. հունվար-փետրվար ամիսներին պետական բյուջեից կատարված ծախսերի ծավալը եղել է ավելի փոքր, քան բյուջեի եկամուտները, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի հավելուրդ՝ 40.7 մլրդ դրամի չափով:

5.4. Պետական պարտք

2022թ. փետրվարի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 9,324.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա փետրվարի նկատմամբ աճելով 6.9%-ով: Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես զգալիորեն աճել է՝ կազմելով 8,847.1 մլն ԱՄՆ դոլար և 2021թ. նույն ամսվա համեմատ ավելանալով 7.6%-ով: Պարտքի աճը հիմնականում պայմանավորված է եղել ներքին պարտքի աճով, իսկ արտաքին պարտքը նվազել է շուրջ 2.1%-ով:

Պարտքի աճին զուգահեռ շարունակել են աճել նաև պետական պարտատոմսերի տոկոսադրույքները: Կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքները նախորդ տարվա փետրվարի համեմատ աճել են 2.3 տոկոսային կետով՝ հասնելով 9.1%-ի, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը՝ 1.5 տոկոսային կետով՝ կազմելով 9.8%:

Գծապատկեր 15. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 16. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը, թեև որոշակիորեն դանդաղել է, սակայն մնում է բարձր մակարդակում: Գնաճի տեմպը շարունակում է մնալ ԿԲ թիրախից զգալիորեն բարձր մակարդակում: Այսպես, 2022թ. փետրվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ սպառողական գները աճել են 6.8%-ով՝ հունվարի համեմատ դանդաղելով շուրջ 0.3 տոկոսային կետով: Սակայն, նախորդ տարվա նույն ամիսներին գնաճը արագացել էր շուրջ 0.8 տոկոսային կետով, հետևաբար,

ընթացիկ տարվա դանդաղումը բազայի էֆեկտից փոքր է եղել: Դա նշանակում է, որ գների աճը շարունակվում է, ինչը արդեն իսկ հանգեցրել է բնակչության կենսամակարդակի անկմանը, քանի որ նվազել է իրական աշխատավարձը: Ավելին, ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքներից կլինի նաև համաշխարհային շուկաներում գների աճի արագացումը: Հետևաբար, չնայած մարտին ՀՀ ԿԲ-ն արդեն իսկ բարձրացրել է տոկոսադրույքը 1.25 տոկոսային կետով, միջազգային գների աճն անխուսափելիորեն կտարածվի նաև ՀՀ տնտեսությունում՝ ավելի արագացնելով ՀՀ գնաճի տեմպը:

5.2. Ավանդներ

Գծապատկեր 17. Ավանդների 12-ամսյա աճը, %



2022թ. փետրվարին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը որոշակիորեն դանդաղել է: 2022թ. փետրվարի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալները նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 10.8%-ով՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 3.1 տոկոսային կետով: Ավանդների աճը ապահովվել է ռեզիդենտների ավանդների շուրջ 16.6% աճով, մինչդեռ ոչ ռեզիդենտների ավանդների ծավալը նվազել է 6.0%-ով:

Գծապատկեր 18. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ



Ավանդների աճին շուրջ 7.5 տոկոսային կետով դրական նպաստում է ունեցել տնային տնտեսությունների ավանդների 16.4% աճը, իսկ ձեռնարկությունների ավանդների աճի տեմպը դանդաղել է՝ 29.1%-ից դառնալով 20.0% և ընդհանուր ավանդների աճին նպաստելով 3.6 տոկոսային կետով:

6.3. Վարկեր

2022թ. փետրվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ վարկերի ծավալները նվազել են, սակայն անկման տեմպը դանդաղել է: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2022 թվականի փետրվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել է 1.3%-ով՝ հունվարի 2.2%-ի նվազման դիմաց:

Գծապատկեր 19. Վարկերի 12-ամսյա աճերը՝ ըստ վարկառուների ռեզիդենտության, %



Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազել են առաջանցիկ տեմպով՝ շուրջ 18.6%-ով և ընդհանուր վարկերին ունեցել են 1.1 տոկոսային կետով բացասական նպաստում: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազել են 0.2%-ով և վարկերի ընդհանուր ծավալին ունեցել են նույն չափով՝ 0.2 տոկոսային կետ բացասական նպաստում:

Գծապատկեր 20. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է իրավաբանական անձանց վարկերի շուրջ 4.2%-ով նվազմամբ, որի նպաստումը ռեզիդենտների ընդհանուր վարկերին կազմել է -2.4 տոկոսային կետ:

Գծապատկեր 21. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ



Վարկերի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի[9] ուսումնասիրելու պարագայում կարող ենք նկատել, որ վարկերի աճին դրական նպաստում են ունեցել հիմնականում հիփոթեքային և շինարարության ոլորտին տրամադրվող վարկերի աճերը, որոնք ընդհանուր վարկերի աճին ունեցել են համապատասխանաբար 4.4 և 1.2 տոկոսային կետով դրական նպաստում: Գյուղատնտեսության ոլորտի վարկերը ունեցել են փոքր դրական նպաստում ընդհանուր վարկերի աճին, որը կազմել է 0.7 տոկոսային կետ: Վարկերի մյուս տեսակներն ընդհանուր վարկերի աճին ունեցել են բացասական նպաստում:

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կորոնավիրուսի նոր դեպքերը կտրուկ նվազել են մարտին: 2022թ. հունվար-փետրվարին համավարակի նոր գրանցված միջին օրական դեպքերը կտրուկ աճել են՝ փետրվարին հասնելով 1858-ի, սակայն, մարտից սկսած դեպքերը կտրուկ նվազել են՝ հասնելով միջին օրական 104 դեպքի: Մահացության դեպքերը այդ ժամանակահատվածում համեմատաբար ցածր են եղել և մարտին ավելի են նվազել՝ հասնելով օրական 6 դեպքի:

[9] Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում: Այդ պատճառով, ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները մի դեպքում նվազում են 0.2%-ով, իսկ մյուս դեպքում՝ 1.6%-ով:

Աշխարհի մյուս երկրների հետ համեմատության մեջ ՀՀ-ում տիրող իրավիճակը նույնպես բարելավվել է: Մեկ միլիոն բնակչության հաշվով գրանցված դեպքերի թվով մարտի 25-ի դրությամբ Հայաստանը զբաղեցնում է աշխարհում 85-րդ տեղը՝ նախորդ ամիս զբաղեցրած 79-րդ տեղի փոխարեն, իսկ մահվան դեպքերի թվով՝ 21-րդ տեղը՝ նախորդ ամսվա 19-րդ տեղի փոխարեն:

Գծապատկեր 22. Կորոնավիրուսի վարակման և մահացության միջին օրական դեպքերը Հայաստանում



** 2022թ. մարտի 25-ի դրությամբ*

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. **Ինչպես սպասվում էր, հունվարին գրանցված տնտեսական ակտիվության աճի բարձր տեմպը զգալիորեն դանդաղել է:** Նախորդ տարվա հունվար-փետրվար ամիսներին ՀՀ-ում տիրող իրավիճակի համեմատ, ընթացիկ տարում գրանցվել է բարձր տնտեսական ակտիվության աճ, որը սակայն աստիճանաբար կնվազի՝ նախորդ տարվա որոշակի վերականգնման և բազայի էֆեկտի չեզոքացմանը զուգընթաց:

2. **Բարձր գնաճի պայմաններում իրական աշխատավարձը նվազել է:** 2022թ. հունվարին գնաճի տեմպը ավելի արագ է եղել, քան անվանական աշխատավարձի աճը՝ կազմելով 7.1%, այն դեպքում, երբ միջին ամսական անվանական աշխատավարձը աճել է 6.2%-ով: Այդ պայմաններում իրական աշխատավարձը նվազել է շուրջ 0.8%-ով՝ այդ չափով նվազեցնելով վարձու աշխատողների կենսամակարդակը:

3. **Ռուս-ուկրաինական պատերազմի բացասական հետևանքներն արդեն իսկ նկատելի են ՀՀ տնտեսության վրա՝** փոխարժեքի կտրուկ արժեզրկման և ԿԲ տոկոսադրույքի բարձրացման տեսքով: Վերջինս ցույց է տալիս,

որ ԿԲ-ն արձանագրել է գնաճային սպասումների արագացում, ինչը տնտեսական ակտիվության դանդաղման պայմաններում կհանգեցնի բնակչության իրական եկամուտների ավելի նվազմանը: Թեև, ԿԲ-ին հաջողվեց տոկոսադրույքի բարձրացման միջոցով չեզոքացնել փոխարժեքի արժեզրկման ալիքը, այնուամենայնիվ ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը մնացել է զգալիորեն արժևորված, ինչն էականորեն նվազեցնում է ՀՀ ապրանքների մրցունակությունը ՌԴ շուկայում: Եթե Ռուսաստանում ռուբլու արժեզրկմանը համապատասխան գնաճ տեղի չունենա, ապա ՀՀ-ից արտահանողներն էական խնդիրների կբախվեն, ինչը բացասաբար կանդրադառնա ինչպես արտահանման ծավալների, այնպես էլ ընդհանուր տնտեսական ակտիվության վրա:

4. Պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքները շարունակում են աճել: Ընթացիկ տարվա փետրվարին կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքները նախորդ տարվա փետրվարի համեմատ աճել են 2.3 տոկոսային կետով՝ հասնելով 9.1%-ի, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը՝ 1.5 տոկոսային կետով՝ հասնելով 9.8%-ի: Հաշվի առնելով այն, որ կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքները կապված են ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքի հետ և այն, որ ԿԲ մարտ ամսին բարձրացրել է տոկոսադրույքը 1.25 տոկոսային կետով՝ կարելի է սպասել գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքների հետագա աճ, ինչը կբարդացնի բյուջեի պակասուրդի ֆինանսավորման գործընթացը՝ հանգեցնելով բյուջեից պարտքի սպասարկման ծախսերի աճին: Վերջինիս աճը կարող է կա՛մ դուրս մղել այլ ոլորտներին (օրինակ՝ սոցիալական ոլորտի ծախսեր, աշխատավարձ և այլն) հատկացվող ծախսերը, կա՛մ հանգեցնել պարտքի ավելի աճին (պարտքի միջոցով տոկոսավճարների մարման եղանակով): Երկուսն էլ անցանկալի երևույթներ են, սակայն ներկա պայմաններում դրանց տեղի ունենալու հավանականությունը բավական մեծ է:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*